որեւիցէ քրդի կամ թուրքի միջամտութիւն գործել նրանց հասարակական գործերի մէջ:

— Բայց կարդալ իմանո՞ւմ է, — հարցրի ես:

— Նա անգրագէտ է եւ իր անունը հազիւ է գրում. բայց իմ կարծիքով, այսպիսի քահանաներ աւելի լաւ են, քան թէ նրանք, որ աստուածաբանական մթին խնդիրների մէջ թթուած, ժողովրդին աւելի մոլորութեան եւ հոգեւոր մեռելութեան մէջ են գցում: Այսպիսի ժողովուրդը կեանք եւ հիմք չունի երկրի վրայ:

— Տէր Մեսրոպը, — առաջ տարաւ նա, — հայ քահանայի տիպ չէ: Նա, աւելի յարմար է ասել, քրդի շէյխ է, որ մասնակից է լինում իր ժողովրդի բոլոր կարիքներին. կռոի ժամանակ քաջ զինուոր է, խաղաղութեան ժամանակ քահանայ է եւ դատաւոր: Միշտ այսպէս են եղել խաշնարած ցեղերի քահանաները: Այսպէս էին եւ Աբրահամը, Իսահակը, Յակոբը ու նրանց յաջորդները: Մեր ընկերներից մէկը քահանայ է, — չեմ ուզում անունը տալ, եւ լաւ քահանայ, գիտէ յունաց, եբրայեցոց եւ լատինացոց լեզուները, կարդացել է այն բոլոր գրքերը, ինչ որ վերաբերում է աստծուն, սկսած այն օրից, երբ յայտնուեցաւ մարդերի մէջ աստուածութեան գաղափարը: Բայց այս երեւելի աստուածաբանը իր բոլոր գիտութիւնը ծալել է եւ պարկն է դրել, որովհետեւ իմանում է, թէ ժողովուրդը չի հասկանայ իրան: Բայց մեր ժողովուրդն աւելի լաւ կը հասկանայ տէր Մեսրոպի լեզուն, որովհետեւ նա ժողովրդի միջից ծագած եւ ժողովրդի գաղափարներով մարդ է, նա դպիր չէ:

Ասլանի այն խօսքը, — թէ «մեր ընկերներից մէկը քահանայ է» — ինձ նոր մտածութեան մէջ գցեց: Ես նրա ընկերներին բոլորին ճանաչում էի, այդ որն էր, որ «աստուածաբանութիւնը ծալած պարկն էր դրել» եւ այժմ սրի հետ էր խաղում: Նա ինձ ոչինչ չասաց եւ ես չհարցրի, որովհետեւ սկզբից յայտնեց, թէ ասելու նպատակ չունի:

Բայց ինձ ոչ սակաւ զարմացնում էր Ասլանի եւրոպական ձեւով կերպարանափոխութիւնը, մանաւանդ այն խօսքը, որ նա ասաց տէրտէրակնոջը՝ «ես ամբողջ վեց տարի այսպէս եմ հագնուած եղել»... որտե՞ղ, ո՞ր երկրում:

Մինչ ես այս մտածութեան մէջ էի, նա ինձ ասաց. — Ֆարհատ, այսօր մենք հասնելու ենք Վան քաղաքը. այնտեղ ոչ ոք չէ ճանաչում ինձ, բացի մի քանի բարեկամներից. ես այնտեղ յայտնուելու եմ, որպէս եւրոպացի բժիշկ. դու պէտք է զգոյշ լինես չխանգարել իմ դերը...

— Ես այնքան յիմար չեմ, — պատասխանեցի: — Բայց եթէ քեզ առաջարկելու լինեն մի հիւանդ, ի՞նչ կանէս: